ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«06» փետրվարի 2023 թ.   N 27-Ա/1

## ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 48-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա անձի ֆունկցիոնալության գնահատման ժամանակ՝

1) օրգանիզմի ֆունկցիաների (b ծածկագրեր) և մարմնի կառուցվածքի (s ծածկագրեր) գնահատման մեթոդական ուղեցույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) անձի գործունեության և մասնակցության (d ծածկագրեր) գնահատման մեթոդական ուղեցույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) միջավայրային գործոնների (e ծածկագրեր) գնահատման մեթոդական ուղեցույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ մեթոդական ուղեցույցներում ախտաբանական վիճակների, օրգանիզմի ֆունկցիաների և մարմնի կառուցվածքի ծածկագրերը կիրառվում են ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հիվանդությունների միջազգային 10-րդ (ՀՄԴ) և ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի մարտի 31-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» N 48-Ա/1 հրամանը:

2/6/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ